Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

**Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով**

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format
**Adapt** — remix, transform, and build upon the material

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք!

5173ա
1012 բ

# ՀՍԽՀ
# ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ

(Առ 1 հունվարի 1934 թ. ընդունված փոփոխություններով ու լրացումներով: սիստեմատիզացիայի յենթարկված ժողովածու)

Գինը 50 կոպ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ Հ. Ս. Խ. Հ. ԱՐԴԺՈՂԿՈՄԱՏԻ

ՅԵՐԵՎԱՆ 1934

Պրոլետարներ բոլոր երկրների, միացե՛ք

# ՀՍԽՀ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ

(Մն. 1 հունվարի 1934 թ. ընդունված փոփոխություննե-
րով ու լրացումներով սիստեմատիզացիայի
ենթարկված ժողովածու)

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ Հ. Ս. Խ. Հ. ԱՐԴԺՈՂԿՈՄԱՏԻ

ԵՐԵՎԱՆ 1934

Սրբագրիչ՝ Անիկ Գասպարյան

Հանձնված է արտադրության 23 դեկտեմբերի 1933 թ.
Ստորագրված է տպագրելու 15 մարտի 1934 թ.

Գլավլիտ № 9279. պատվեր № 2594. տիրաժ 1000

Պետհրատի Տպարան — Երևան

# ՎՈՐՈՇՈՒՄ

## ՀՍԽՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՏԻ ՅԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ

### Քաղաքներում շրջանային կենտրոններում յեվ բանվորական ավաններում սահմանվող բնակարանային վարձի մասին

*1928 թ. մարտի 10-ին*

*Գոյության ունեցող բնակելի ֆոնդը պահպանելու և բնակարանային վարձը բնակարանային անտեսության ծախքերը ծածկելու համար անհրաժեշտ չափերին մոտեցնելու նպատակով, համաձայն բնակարանային վարձի վերաբերյալ ԽՍՀՄ Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի և Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի 1926 թ. հունիսի 4-ի վորոշման (ԽՍՀՄ Որ. և Կարգ. Ժող. 1926 թ. № 44 հոդ. 312) և ի վերացումն 1924 թ. հուլիսի 2-ի «Բնակարանային դեկրետի» (ՀՍԽՀ Որ. և Կարգ. Ժող. 1924 թ. № 11 հոդ. 39) և 1926 թ. հունվարի 12-ի «1924 թ. հուլիսի 26-ի բնակարանային դեկրետի փոփոխման ու լրացման մասին» վորոշման (ՀՍԽՀ Որ. և Կարգ. Ժող. 1926 թ. № 2, հոդ. 8) ՀՍԽՀ Կենտրո-*

նական Գործադիր Կոմիտեն և Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը ՎՈՐՈՇՈՒՄ ԵՆ՝

1. 1928 թ. ապրիլի մեկից քաղաքներում, շրջանային կենտրոններում և բանվորական ավաններում բարեկարգ բնակարանի մի քառակուսի մետր (1,98 քառ. արշ.) պլանանի բնակելի տարածության համար սահմանվում են բնակարանային վարձի ամսական հետևյալ կոպարները.

| Բանվորները և ծառայողները, վորոնք ստանում են ամսական | Վճարում են Երևանում, Լենինականում և քաղաքատիպ վայրերում | Վճարում են շրջանային կենտրոններում | Վճարում են բանվորական ավաններում |
|---|---|---|---|
| ա) Մինչև 20 ռուբլի ներառյալ | 5,5 կոպ. | 5,5 կոպ. | 5,5 կոպ. |
| բ) 21 ռուբլուց մինչև 30 ռ. | 8 » | 7 » | 6 » |
| գ) 31 » » 40 » | 12 » | 9 » | 7 » |
| դ) 41 » » 50 » | 15 » | 12 » | 9 » |
| ե) 51 » » 60 » | 18 » | 14 » | 11 » |
| զ) 61 » » 70 » | 21 » | 17 » | 13 » |
| է) 71 » » 80 » | 23 » | 19 » | 15 » |
| ը) 81 » » 90 » | 27 » | 22 » | 17 » |
| թ) 91 » » 100 » | 30 » | 25 » | 19 » |
| ժ) 101 » » 110 » | 33 » | 27 » | 21 » |
| ի) 111 » » 125 » | 36 » | 30 » | 23 » |
| լ) 126 » » 145 » | 38 » | 32 » | 26 » |
| խ) 145 ռուբլուց բարձր աշխատավարձի յուրաքանչյուր լրիվ 25 ռ. համար ավելացվում է 5-ական կոպեկ, բայց վոչ ավելի քան | 80 » | 60 » | 40 » |

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— 1.— Պետական թոշակառուները և սոցիալական ապահովագրության կարգով խնամվող անձինք, վորոնք ամսական ստանում են 20 ռուբլուց վոչ ավելի, նաև նպաստ ստանալու իրավունք ունեցող գործազուրկները, կարմիր բանակայինների՝ ինքնուրույն յեկամտի աղբյուր չունեցող ընտանիքները, բնակարանային վարձը վճարում են 20 ռ. վոչ ավելի աշխատավարձ ստացող բանվորների և ծառայողների համար սահմանված դրույքներով (1-ին հոդվածի «ա» կետ):

Պետական դպրոցների ուսանողները, վորոնք ստանում են պետական թոշակ կամ գտնվում են պետական ծառայության մեջ, բնակարանային վարձը վճարում են բանվորների և ծառայողների համար սահմանված դրույքներով՝ իրենց ստացած թոշակի կամ աշխատավարձի համեմատ: (ՀՍԽՀ Կենտգործկոմի և Ժողկոմխորհի 1933 թ. մարտի 14-ի վորոշման խմբագրությամբ Որ. և Կարգ. Ժող. 1933 թ. № 1, հոդ. 7):

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 2.— Պետական թոշակառուները, սոցիալական ապահովագրության և սոցիալական ապահովագրության կարգով խնամվող անձինք, վորոնք ամսական 20 ռ. ավելի նպաստ կամ թոշակ են ստանում, բնակարանային վարձը վճարում են իրենց ստացած նպաստի կամ

Թոշակի համեմատ՝ ամսական 20 ռ. ավելի ստացող բանվորների և ծառայողների համար սահմանված դրույքներով (1-ին հոդվածի «բ»—«ծ» կետերը)։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 3.— 1-ին ծանոթության մեջ հիշատակված կարգերի բանակայինների ընտանիքների անդամները կարող են իսպառ ազատվել բնակարանային վարձից տեղական քաղխորհուրդների կողմից, իսկ վորտեղ քաղխորհուրդներ չկան—շրջանային գործկոմների կողմից։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 4.— Գրական աշխատանքով զբաղվողները, նկարիչները, քանդակագործներն ու գիտական աշխատավորները բնակարանավարձ վճարում են բանվորների և ծառայողների համար սահմանված դրույքներով։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 5.— Բանվորներն ու ծառայողները, ինչպես նաև բանվորներին ու ծառայողներին հավասարեցրած անձինք, գյուղական վայրերում բնակարանային վարձ են վճարում տանտիրոջ հետ փոխադարձ համաձայնության կարգով; սակայն շրջանային կենտրոնների ու բանվորական ավանների համար սահմանված բնակարանային վարձի դրույքներից վոչ ավելի։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 6.— Բանվորագյուղացիական Կարմիր Բանակի միջին,

ավագ և բարձր կադրային հրամկազմին պատկանող զինվորականները, ինչպես նաև գերակետիկ ծառայության շարային և կրտսեր կազմին պատկանող զինվորականները, որոնք ապրում են այնպիսի տներում, որտեղ բնակարանավարձը գանձվում է սահմանված դրույքներով, — բնակարանավարձը հավասարեցվում է բանվորներին և ծառայողներին և բնակարանավարձը վճարվում է նրանց հիմնական ռոճիկից:

(ՀՍԽՀ Կենտգործկոմի և Ժողկոմխորհի 1931 թ. սեպտեմբերի 14-ի որոշման խմբագրությամբ):

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 7. — Կադրային հրամկազմի այն զինվորականները, բացի ժամկետային ծառայության մեջ գտնվող կրտսեր կազմից, որոնք ուղարկվում են ուսումնական դպրոցներ ուսում ստանալու, կամ գտնվում են ճամբարում, յերկարատև գործուղման մեջ, փորձնական աշխատանքներում (ստաժի համար) թե մշտական և թե ժամանակավոր բնակության տեղում բնակելի տարածության համար վճարում են բնակարանավարձի միայն կեսը այն տներում, որտեղ բնակարանավարձը գանձվում է սահմանված դրույքներով:

Այս արտոնությունը տրվում է այն դեպքում, յերբ զինվորականին նրա ժա-

ժամանակավոր բնակության վայրում ձրիա-բար չի տրամադրվել բնակելի տարածու-թյուն։

(ՀՍԽՀ Կենտգործկոմի և Ժողկոմխորհի 931 թ. նոյեմբերի 14-ի վորոշման խմբագրու-թյամբ Որ. և Կարգադր. Ժողով. 1931 թ. №3, հոդ 191)։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 8.— ԽՍՀՄ, ԱՍ-ՖԽՀ և ՀՍԽՀ մեկ կամ մի քանի չքանչան-ներով պարգևատրված անձինք բռնած բնակելի տարածության համար վճարում են 10-ից մինչև 50 % զեղչով այն տնե-րում, վորտեղ բնակավարձը գանձ-վում է օրենքով սահմանված դրույքներով։ Զեղչի չափը սահմանում են տեղական խորհուրդները՝ պարգևատրվածների յե-կամուտի համեմատ։ Բնակելի տարա-ծության ավելցուկի և լրացուցիչ տարա-ծության համար՝ պարգևատրվածները վճարում են սովորական չափով։

Պարգևատրվածների մահվան դեպքում նրանց արտոնությունները վերապահվում են նաև նրանց ընտանիքի անդամներին՝ ամուսիններին, անչափահաս յերեխանե-րին և նրանց խնամքի տակ գտնվող անաշ-խատունակներին։

(ՀՍԽՀ Կենտգործկոմի և Ժողկոմխորհի 1931 թ. ապրիլի 27-ի վորոշման խմբագրությամբ։ Որ. և Կարգ. Ժողովածու 1931 թ. №2 հոդ. 96)։

2. Տնայնագործներն ու արհեստավորները

իրենց յեկամտի համեմատ վճարում են՝

ա) Նրանք, վորոնք չունեն վարձու բանվորներ կամ ունեն մի բանվոր կամ յերկու աշակերտ և յեկամտային հարկ չեն վճարում,— տնատիրոջ հետ համաձայնության գալով, բայց վոչ պակաս քան 26 կ. մի քառ. մետրի համար այս վորոշմամբ նախատեսնված բոլոր վայրերում և վոչ ավելի քան 38 կ. Յերևան ու Լենինականի քաղաքներում, 32 կ. այլ քաղաքներում և 26 կ. շրջանային կենտրոններում ու բանվորական ավաններում.

բ) Նրանք, վորոնք չունեն վարձու բանվորներ կամ ունեն մի բանվոր կամ յերկու աշակերտ, բայց վճարում են յեկամտային հարկ,— տնատիրոջ հետ համաձայնության գալով, բայց վոչ պակաս քան 38 կ. և վոչ ավելի քան 80 կ. մի քառ. մետրի համար Յերևան ու Լենինականի քաղաքներում, վոչ պակաս քան 32 կ. և վոչ ավելի քան 60 կ. այլ քաղաքներում, և վոչ պակաս քան 26 կ. և վոչ ավել քան 40 կ. շրջանային կենտրոններում և բանվորական ավաններում.

գ) Նրանք, վորոնք ունեն յերկու կամ յերեք վարձու բանվոր կամ յերեքից մինչև վեց աշակերտ,— տնատիրոջ հետ համաձայնության գալով, բայց վոչ պակաս քան 88 կ. մի քառ. մետրի համար այս վորոշմամբ նախատեսնված բոլոր վայրերում, և վոչ ավելի քան 1 ռ. 60 կ. Յերևան և Լենինականի քաղաքներում, 1 ռ. 40 կ. այլ քաղաքներում և 1 ռ. 20 կ. շրջանային կենտրոններում և բանվորական ավաններում:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1.— Արհեստագործական կոոպերացիայի ընկերությունների (արտելների) և կանոնադրության հիման վրա գործող աշխատավորական արտելների անդամները բնակարանային վարձ են վճարում տնայնագործների և արհեստավորների համար 2-րդ հոդվածի «ա» և «բ» կետերում սահմանված կարգերով:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 2.— Նույն արտելների անդամները, յերբ այդ արտելները աշխատում են պետական ձեռնարկությունների և հիմնարկությունների պատվերներով, յեթե նրանք իրենց աշխատանքի համար ստանում են վորոշ վարձատրություն և մասն չեն ստանում արտելի վաստակից,— բնակվարձ են վճարում բանվորների ու ծառայողների համար 1-ին հոդվածում սահմանված կարգերով:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 3.— Արհեստագործական կոոպերացիայի ցանցում յեղած հատուկ օրենքի (ԽՍՀՄ Որ. և Կարգ. Ժող. 1930 թ. № 56, հոդ. 588) պահանջներին բավարարող արտելների անդամներին, իրենց ընտանիքի անդամներին ու նրանց խնամքի տակ գտնվող անձանց կողմից բռնվող բնակելի տարածության, նաև կոմունալ ծառայությունների համար վճարում են բանվորների վերաբերյալ սահմանված դրույքներով: (ՀՍԽՀ Կենտգործկոմի և

ժողկոմխորհի 1931 թ. մայիս. 14-ի վորոշման խմբագրությամբ: Որ. և Կարգ. Ժողովածու, 1931 թ. № 3. հոդ. 191):

Տնտեսավարների և ձեռնարկատիրական-տեխնիկական աշխատավորների համար սահմանել բնակարանային վարձի հետևյալ դրույքները.

| Ձեռնարկատիրական-տեխնիկական աշխատավորներ և տնտեսավարներ, վորոնք ստանում են ամսական | Յուրաքանչյուր քառակուսի մետր տարածության համար վճարում են: Յերևանում, Լենինականում և քաղաքատիպ վայրերում | Շրջանային կենտրոններում | Բանվորական ավաններում |
|---|---|---|---|
| Մինչև 325 ռուբլի | 44 կոպ. | 40 կոպ. | 36 կոպ. |
| 326 ռ.— 350 ռուբլի | 50 » | 46 » | 40 » |
| 351 » 375 » | 54 » | 50 » | 46 » |
| 376 » 400 » | 58 » | 54 » | 50 » |
| 401 » 425 » | 62 » | 58 » | 54 » |
| 426 » 450 » | 66 » | 62 » | 58 » |
| 451 » 475 » | 70 » | 66 » | 62 » |
| 476 » 500 » | 74 » | 70 » | 66 » |
| 571 » 525 » | 78 » | 74 » | 70 » |
| 526 » 550 » | 82 » | 78 « | 74 » |
| 551 » 575 » | 86 » | 82 » | 78 » |
| 576 » 600 » | 91 » | 86 » | 82 » |
| 601 » 625 » | 96 » | 90 » | 86 » |
| 626 » 650 » | 1,01 » | 94 » | 90 » |
| 651 » 675 » | 1,06 » | 98 » | 94 » |
| 676 « 700 » | 1,11 » | 1,02 » | 98 » |
| 701 » 725 » | 1,16 » | 1,06 » | 1,02 » |
| 726 » 750 » | 1,22 » | 1,10 » | 1,06 » |
| 751 » 800 » | 1,27 » | 1,14 » | 1,10 » |
| 800 » բարձր » | 1,32 » | 1,18 » | 1,14 » |

Այս վորոշումը գործադրել 1933թ. հուն-վարի մեկից:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. Այս հոդվածում հիշված բնակարանային վարձի դրույք-ները տարածվում են այն տնտեսավարնե-րի և ճարտարապետա - տեխնիկական աշ-խատողների վրա, վորոնք ստանում են աշխատավարձ ԽՍՀՄ ԺԿԽ և Համ. Կ.Կ.(բ)Կ. 1932 թ. փետրվարի 8-ի վո-րոշման համաձայն:)

(ՀՍԽՀ Կենտգործկոմի և Ժողկոմխորհի 1933 թ. փետր. 22-ի վորոշման խմբ.: Որ. և Կարգ. Ժողովածու, 1933 թ. № 1 հոդ. 5):

2-բ. Տրանսպորտի մարմիններին պատ-կանող և քաղաքային բնակավայրից դուրս գտնվող բնակելի շենքերի վարձի ընդհանուր հիմունքները սահմանում են Ճանապարհնե-րի Հաղորդակցության Ժողովրդական Կոմի-սարիատի մարմինները, համաձայնության գալով յերկաթուղային տրանսպորտի պրոֆե-սիոնալ միությունների կենտվարչության հետ.

2-գ. հոդվածում հիշված ընդհանուր հի-մունքներով պետք է նախատեսվեն վարձի տարբեր կոչարները՝ բնակիչների հարմարու-թյունների և հեռավորության համեմատ:

Յուրաքանչյուր շենքի վարձի չափն այդ ընդհանուր հիմունքների համաձայն վորոշում են տրանսպորտի այն մարմինները, վորոնց պատկանում է շենքը, համաձայնության գա-

լով համապատասխան պրոֆմիության մարմնի հետ:

Բնակվարձի չափը տրանսպորտին պատկանող շենքում չպետք է ավելի լինի բնակարանային որենքով սահմանված բնակվարձի կոպարներից:

(ՀՍԽՀ Կենտգործկոմի և Ժողկոմխորհի 1933 թ. օգոստոսի 3-ի վորոշման խմբագրությամբ: Որ. և Կարգ. Ժող. 1933 թ. № 3 հոդ. 65):

3. Ազատ պրոֆեսիայի տեր անձինք, նայած իրենց յեկամուտներին՝ վճարում են.

ա) յեկամտային հարկ չվճարողները – 38 կ. մի քառ. մետրի համար Յերևան և Լենինական քաղաքներում, 32 կ. այլ քաղաքներում և 26 կ. շրջանային կենտրոններում ու բանվորական ավաններում.

բ) Յեկամտային հարկ վճարողները – տընատիրոջ հետ համաձայնության գալով, բայց վոչ պակաս, քան 40 կ. և վոչ ավելի, քան 1 ռ. 60 կ. մի քառակուսի մետրի համար Յերևան ու Լենինական քաղաքներում, 35 կ. վոչ պակաս և 1 ռ. 40 կ. վոչ ավելի այլ քաղաքներում և 30 կ. վոչ պակաս և 1 ռ. 20 կ. վոչ ավելի շրջանային կենտրոններում և բանվորական ավաններում:

3-ա. Նկարիչներն ու քանդակագործները, յեթե նրանք կերպարվեստի բարձրորակ աշխատողներ են իրենց մասնագիտական աշխատանքների, արհեստանոցի և ստուդիայի բռնած տա-

բածության համար անկախ նրանից, թե այդ տարածությունն ինչ չափի՛ է, բնակվարձ վճարում են ավելորդական կարգով:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Աշխատողի բարձրորակ լինելու հանգամանքը հաստատվում է Գեղարվեստի աշխատավորների Արհեստակցական Միության տեղական մարմնի կողմից տված վկայականով (ՀՍԽՀ Կենտգործկոմի և Ժողկոմխորհի 1930 թ. հոկտեմբերի 4-ի վորոշման խմբագրությամբ: Որ. և Կարգ. Ժող. 1930 թ. № 14 հոդ. 243):

4. Առևտրականները և անաշխատ կատեգորիաների այլ անձինք, նայած իրենց յեկամուտներին, վճարում են բնակարանային վարձ տնատիրոջ հետ համաձայնության գալով, բայց վոչ պակաս քան 1 ռ. 98 կ. և վոչ ավելի քան 3 ռ. մի քառ. մետրի համար Յերևան և Լենինական քաղաքներում, 1 ռ. 32 կ. վոչ պակաս և 2 ռ. 40 կ. վոչ ավելի— այլ քաղաքներում, և 1 ռ. 32 կ. վոչ պակաս 2 ռ. վոչ ավելի՝ շրջանային կենտրոններում և բանվորական ավաններում:

5. Բանվորների և ծառայողների և նրանց հավասարեցրած անձանց, 2-րդ հոդվածի «ա» և «բ» կետերում հիշված տնայնագործների և արհեստավորների, ինչպես նաև յեկամտային հարկ չվճարող, ազատ պրոֆեսիայի տեր անձանց (3-րդ հոդվածի «ա» կետ) բնակարանային վարձի կոպարները յենթակա յեն իջեցման:

ա) Էլեկտրական լուսավորության բացակայության դեպքում, յեթե այդ վայրում էլեկտրականություն կա . . . . . . . . . . . 5 %-ով
բ) Բակում ջրմուղ չլինելու դեպքում . . . . 5 %-ով
գ) Միջանցիկ բնակարանների համար . . . . 6 %-ով
դ) Կիսամութ և միջանցիկ բնակարանների համար 15 %-ով
ե) Տանիքի տակի բնակարանի համար . . . . 10 %-ով
զ) Նկուղային և կիսանկուղային բնակարանների համար 25 %-ով

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1.— 5-րդ հոդվածի «ա», «դ» կետերով նախատեսված՝ բնակարանային վարձի իջեցման ընդհանուր գումարը չպետք է գերազանցի բնակարանային վարձի 50%-ից և պետք է լինի վոչ պակաս քան 5,5 կոպ. մի քառ. մետրի համար:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 2.— Յեթե բանվորների և ծառայողների և նրանց հավասարեցրած անձանց ծախքով ու նրանց հետ միասին ապրում են ինքնուրույն աշխատանքից զուրկ ընտանիքի այլ անդամներ, և ընտանիքի աշխատող յուրաքանչյուր անդամին ընկնում է նրա ծախքով ապրող 2 անձից ավելի, ապա նշված աշխատողի ծախքով ապրող 3-րդ անձից, յուրաքանչյուրի համար բնակարանավարձը զեղչվում է 10 %-ով, սակայն զեղչի ընդհանուր գումարը չի կարող ամբողջ բնակվարձի 30%-ից ավել լինել:

6. Վարձողները վերոհիշյալ կոպարներով բնակվարձ են վճարում իրենց և իրենց ծախքով ապրող՝ ընտանիքի անդամների բռնած բնակե-

լի տարածության համար յուրաքանչյուրին ընկնող յոթ և կես քառ. մետր (15 քառ. արշ.) տարածության սահմաններում:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Վարձողի ընտանիքի անդամ են համարվում ամուսինը և նրա հետ միասին ապրող և ամբողջովին կամ մասամբ նրա ծախքով ապրող այլ անձինք, ինչպես և նրա տնային աշխատողները:

7. 6-րդ հոդվածում նախատեսնված նորմայից ավելի բռնած բնակելի տարածության համար վարձողները վճարում են համապատասխան կոպարների կրկնակի չափով, բայց ոչ պակաս քան 38 կ. Երևան և Լենինական քաղաքներում, 32 կ. այլ քաղաքներում և 26 կ. շրջանային կենտրոններում ու բանվորական ավաններում:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Բանվորներն ու ծառայողները և նրանց հավասարեցրած անձինք, ինչպես նաև այն անձանց կատեգորիաները, վորոնց տեղական խորհուրդների և շրջանային գործկոմների կողմից կտրվի նորմայից դուրս լրացուցիչ բնակելի տարածություն, ավելորդ բնակելի տարածության համար վճարում են սովորական չափով՝ նորմայով նրանց հասանելիք բնակելի տարածության մի յերրորդի սահմաններում:

8. Բանվորների և ծառայողների բնակարանային վարձը հաշվելիս նկատի չի առնվում

նրանց ամբողջ ամսական աշխատավարձը, բացի արտաժամյա աշխատավարձից, ինչպես նաև պատասխանատու ծառայողների կոպարներով վարձատրություն ստացող անձանց հատուկ հավելումից (нагрузка) վարձու աշխատանքի անձինք, որոնք վարձատրություն են ստանում, որպես մասնագետներ, կամ աշխատում են զուգավորությամբ, կամ բացի հաստատուն կոպարից ստանում են արտաժամյա կամ տոկոսային վարձատրություն, — բնակարանային վարձը վճարում են իրենց ամսական յեկամուտի միացյալ գումարի համեմատ:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Մանկավարժական աշխատանքով զբաղվող (բարձրագույն, միջնակարգ և տարրական դպրոցներում դիտություններ և առարկաներ ավանդող) անձանց բնակվարձը հաշվելիս, նկատի յե առնվում միայն այն աշխատավարձը, որն ստացվում է աշխատանքի ժամանակի՝ հատկապես նրանց վերաբերյալ սահմանված նորմայի համար, այդ նորմայից դուրս կամ մի այլ դպրոցական հիմնարկում ստացվող աշխատավարձը համարվում է արտաժամյա լրացուցիչ վարձատրություն և բնակվարձը հաշվելիս նկատի չի առնվում:

Յեթե մանկավարժական աշխատանքով զբաղվող անձը բացի հիմնական մանկավարժական գործունեյությունից զուգավորության կարգով աշխատում է մի

այլ հիմնարկում կամ ձեռնարկության մեջ, բնակվարձը հաշվելիս նկատի չի առնվում ա-վելի բարձր (մանկավարժական կամ այլ աշխատանքի համար ստացվող) աշխատավարձը: (ՀՍԽՀ Կենտգործկոմի և Ժողկոմխորհի 1931 թ. սեպտեմբեր 14-ի վորոշման խմբագրությամբ: Որ. և Կարգադր. Ժողով. 1931 թ. № 3, հոդ. 191):

9. Յեթե ընտանիքի կազմի մեջ կան մի քանի անձինք, վորոնք ունեն ինքնուրույն աշխատավարձ, բնակարանային վարձը հաշվելիս նկատի չի առնվում ընտանիքի մեջ ամենաբարձր աշխատավարձ կամ յեկամուտ ունեցող անդամի աշխատավարձը կամ յեկամուտը:

10. Բանվորներն ու ծառայողները և նրանց հավասարեցված անձինք տվյալ ամսի բնակարանային վարձը վճարում են հաջորդ ամսի 10-ից վոչ ուշ, իսկ մնացած կատեգորիաները վճարում են ընթացիկ ամսի 15-ից վոչ ուշ:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Տեղական խորհուրդներին, տրանսպորտային և արդյունաբերական ձեռնարկություններին պատկանող շենքերում բնակարան վարձող անձանց կողմից այդ հոդվածով սահմանված ժամանակամիջոցում բնակվարձը չվճարելու դեպքում առաջին ամսվա ընթացքում ո-րական գանձվում է բնակվարձի 0,1 տոկոսի չափով, իսկ հետագա ժամանակի համար 0,2 տոկոսի չափով: Տույժի ընդհանուր չափը (գումարը) չի կարող լինել

հիմնական պարտքի բնակվարձի 50 տոկոսից ավելի։ (ՀՍԽՀ Կենտգործկոմի և Ժողկոմխորհի 1931 թ. սեպտեմբերի 14-ի վորոշման խմբագրությամբ։ Օրենք. և Կարգ. Ժող. 1931 թ. № 3, հոդ. 191)։

11. Այս վորոշման ներգործությունը տարածվում է նաև բոլոր ազգայնացված, քաղաքայնացված և մասնավոր տների վրա, բացի կառուցման իրավունքի հիման վրա (Քաղ. Օր. 166 հոդ. ծանոթություն) կառուցված, վերաշինված և ավարտված տներից յեվ որով բնակվողներին վարձով տրվող հյուրանոցներից։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Բանվորական — բնակարանային կոոպերատիվներին տրվող տներում բնակվող բանվորների, ինչպես նաև նոր կառուցված տների բնակարանային վարձի կոպարները կարգավորվում են հատուկ կանոններով։

12. Տնատերերի կողմից վարձողներին մատուցվող կոմունալ ծառայությունների, ինչպես նաև կենտրոնական տաքացման վարձը վճարվում է յուրաքանչյուր վարձողի փաստացի սպառման չափով, անկախ նրա վճարած բնակարանային վարձի չափից։

13. Տների ծախսերը, այն է՝ կառավարչությունը, շենքերի ու մայթերի վերաշինությունն ու ապահովությունը, գիշերապահների և դռնապանների վարձը, բակերի ու սանդուղքների լուսավորությունը, անհրաժեշտ ինվենտար գնելու և այլ ընթացիկ ծախսերը,

ինչպես և հարկերն ու ապահովագրական տուրքերը վճարվում են տնատերերի հաշվին:

14. Այս վորոշումը կիրարկություն գնելուց հետո բնակելի շենքերի վերաբերյալ բոլոր պայմանագրերի ու իրավահարաբերությունների այն մասը, վորը վերաբերում է այդ շենքերի վարձի չափին և այս վորոշումով նախատեսված այլ պայմաններին, յենթակա յե փոփոխության համաձայն այս վորոշման:

15. Այս վորոշումով նախատեսված բնակարանային վարձի նորմաներից ավելի բնակվարձ գանձել չի թույլատրվում: Նորմայից ավելի բնակվարձ գանձողները պատասխանատվության են յենթարկվում ՀՍԽՀ Քրեական Օրենսգրքի համաձայն:

16. Ի զարգացումն այս վորոշման հրահանգները հրատարակում է Ներքին Գործերի Ժողովրդական Կոմիսարիատը:

(Օրենք. և կարգ. ժողովածու, 1928 թ., № 4, հոդ. 31)

---

## ՎՈՐՈՇՈՒՄ

## ՀՍԽՀ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ

### Քաղաքայնացված և մասնավոր տների մեջ հիմնարկությունների բռնած շենքերի վարձի մասին

*1927 թ. սեպտեմբերի 13-ին*

Պետական և հասարակական հիմնարկությունների բռնած քաղաքայնացված և մասնա-

վոր շենքերը իրենց յեկամուտներով պահելու և այդ շենքերի վարձի վերաբերյալ հարցը կանոնավորելու նպատակով ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը ՎՈՐՈՇՈՒՄ Ե.—

1. Քաղաքայնացված, ինչպես նաև մասնավոր տներում գրասենյակների և վոչ առևտրական ու վոչ արդյունաբերական բնույթի այլ կարիքների համար բռնած շենքերի վարձավճարի կոպարները սահմանում են տեղական գործադիր կոմիտեները, հաշվի առնելով տեղական պայմանները հետևյալ չափերով:

ա) պետական և տեղական բյուջեյով պահվող հիմնարկությունների պրոֆեսիոնալ, կուսակցական և այլ հասարակական կազմակերպությունների համար յուրաքանչյուր ամիս 27-ից մինչև 40 կոպեկ ամեն մի քառակուսի մետր տարածության համար:

բ) տնտեսավարական հիմունքներով պահվող պետ. հիմնարկությունների և ձեռնարկությունների, ինչպես և կոոպերատիվ կազմակերպությունների համար ամիսը 56-ից մինչև 67 կոպ. ամեն մի քառակուսի մետր տարածության համար.

գ) շահադիտական նպատակներ չհետապնդող մասնավոր հիմնարկությունների և ընկերությունների համար վարձավճարի կոպարները սահմանվում են ամիսը մեկ ռուբլի յուրաքանչյուր քառակուսի մետր տարածության համար:

դ) մնացած բոլոր հիմնարկությունների,

ձեռնարկությունների և կազմակերպություն-ների համար վարձավճարը սահմանվում է փոխադարձ համաձայնությամբ, բայց վոչ պակաս այս հոդվածի «գ» կետում հիշատակված կոպարից (1ռուբլի):

2. Այն դեպքում, յերբ հիմնարկությունը բռնում է ամբողջ շենքը և շենքի նորոգությունն ու պահպանության ծախքերը կատարում է իր հաշվով, վարձավճարը սահմանվում է.

ա) պետական կամ տեղական բյուջեյով պահվող հիմնարկությունների, պրոֆեսիոնալ, կուսակցական և այլ հասարակական կազմակերպությունների համար շենքի շիջուցման արժեքի չափով:

բ) տնտեսավարական հիմունքներով պահվող պետական հիմնարկությունների և ձեռնարկությունների, ինչպես նաև կոոպերատիվ կազմակերպությունների համար շիջուցման արժեքի չափով և կառուցման համար ծախսված կապիտալի 3%-ից վոչ ավելի:

գ) մասնավոր հիմնարկությունների և ձեռնարկությունների համար շիջուցման արժեքի չափով և կառուցման 8%-ից վոչ ավելի:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Փայտե շենքերի համար շիջուցումը տարեկան հաշվվում է նրանց արժեքի մի տոկոսի չափով, փայտե և խառն շենքերի համար՝ յերկու տոկոսի չափով:

3. Գործկոմների տրամադրության տակ

յեղած վոչ բնակելի շենքերը (խանութներ, առևտրական դրասենյակներ, պահեստներ և այլն) պետական մարմիններին, արհեստակցական, կուսակցական և կոոպերատիվ կազմակերպություններին, ինչպես նաև մասնավոր միություններին ու անձանց վարձով տալու պայմանները ու կարգը սահմանվում են գործկոմների նախագահությունների առանձին վորոշումներով՝ Անդրառևտրի ժողկոմատի Խ. Հայաստանի լիազորի վարչության ներկայացուցիչների մասնակցությամբ:

4. Այս վորոշմամբ սահմանված վարձավճարի մեջ չի մտնում հողային ռենտայի վըճարը:

5. Աշխատանքի պալատների քաղաքայնացված տներում բռնած շենքերից վարձ չի գանձվում. Նրանց բարեկարգ վիճակում պահելու պատասխանատվությունը դրվում է այն որգանների վրա, վորոնց տնօրինության տակ գըտնվում են այդպիսիները:

6. Այս վորոշման 1-ին հոդվածով սահմանված վարձավճարի կոպարները կիրառվում են միայն այն տարածության համար, վորը բռնված է 3,5 քառակուսի մետրի (7 քառ. արշին) սահմաններում՝ հիմնարկության մեջ փաստորեն աշխատող յուրաքանչյուր աշխատակցի համար:

7. Պետական, բուժական, հաշմանդամային, դպրոցական և կուլտուրկրթական հիմնարկությունների, այլ և այնպիսի հիմնար-

կությունների կողմից բռնված շենքերի հա-
մար, ինչպիսիք են դատական նիստերի դահ-
լիճները, լաբորատորիաները, գործարանները
այլն, վարձավճարը գանձվում է 1-ին հոդվածի
«ա» կետով սահմանված նորմայով, նրանց
կողմից փաստորեն բռնված տարածության
համար:

8. Եթե տարածությունն ավելի յէ, քան
այդ սահմանված է օգտագործման նորմաներից
6-րդ հոդվածով, այդ դեպքում հիմնարկու-
թյունները վճարում են նրանց համար սահ-
մանված կոպարների մեկ ու կես անգամի չա-
փով, յեթե այդ ավելորդ տարածությունը կա-
րող է տեխնիկապես անջատվել:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Պետական և տե-
ղական բյուջեյով պահվող հիմնարկու-
թյունների, ինչպես և պրոֆեսիոնալ, կու-
սակցական և այլ հասարակական կազմա-
կերպությունների պաշտոնատար անձանց-
առանձնասենյակների վարձը վճարվում է
1-ին հոդվածի «ա» կետով սահմանված
կոպարներով, անկախ նրանց բռնած տա-
րածությունից:

9. Պարտավորեցնել դերատեսչություն-
ներին մտցնել իրենց նախահաշիվների մեջ
հատկացումներ իրենց բռնած շենքերի վարձի
համար, այս վորոշման հիմունքներով:

10. Տնտեսավարական հիմունքներով պահ-
վող հիմնարկությունները, կոոպերատիվ կազ-
մակերպությունները, պետական և տեղական

բյուջեյով պահվող հիմնարկությունները, ինչպես և պրոֆեսիոնալ ու կոոպերացիական յեվ այլ հասարակական կազմակերպությունները իրենց բռնած շենքերի վարձը վճարում են 1927 թ. հոկտեմբերի 1-ից։

11. Հիմնարկությունների կողմից մինչև այս վորոշման հրապարակվելը շենքերի մասին կնքած պայմանագրերի այն մասը, վորը վերաբերում է շենքի վարձի չափին, յենթակա յե փոփոխության համաձայն այս վորոշման։

12. Հանձնարարել Ներքգործժողկոմատին յերկու շաբաթվա ընթացքում հրատարակել հրահանգ այս վորոշումը կիրառելու մասին։

(Որ. և Կարգ. Ժող. 1927 թ. № 15, հոդ 101)

---

## ՀՐԱՀԱՆԳ

## ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ ՅԵՎ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ

*1928 թ. ապրիլ 9-ին*

Ի զարգացումն ՀՍԽՀ Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի Նախագահության և Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի 1928 թ. մարտի 10-ի «Քաղաքներում, գավառային ու գավառակային կենտրոններում և բանվորական ավաններում սահմանվող բնակարանային վարձի մասին» վորոշման, Ներքին Գործերի Ժողովր-

դական Կոմիսարիատը և Արդարադատության Ժողովրդական Կոմիսարիատը հրապարակում են հետևյալը.—

1. Յուրաքանչյուր տան բնակելի տարածության 2/3 մասը համարվում է կոմունալ ֆոնդ և տրամադրվում է քաղխորհուրդներին ու գործադիր կոմիտեներին՝ բանվորներին հատկացնելու համար. (Ժողկոմխորհի և Տնտխորհի 1931 թ. օգոստոսի 22-ի որոշման համաձայն):

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1.— ԵԹԵ բանվորներն ու ծառայողները ներկայումս ապրում են տանտիրոջ ֆոնդի սենյակներում, վերջիններն ազատվելուց հետո տրամադրվում են տանտերերին:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 2. — Կոմունալ ֆոնդի համար մաս հատկացնելուց ազատվում են մինչև յերկու սենյակ ունեցող տները, իսկ յերեք սենյակ ունեցողները, նայած տան բնակելի տարածությանը, ընտանիքի անդամների թվին և նրանց բռնած բնակելի տարածության չափին:

2. Կոմունալ ֆոնդից հատկացվող բնակարաններում բնակվելու համար, այս հրահանգի 1 հոդ. հիշված հիմնարկների կողմից, տրվում են համապատասխան օրդերներ:

3. Բանվորները և ծառայողները և նրանց հավասարեցրած անձինք բնակարանային վարձը վճարում են օրենքով սահմանված կարգ-

ներով, անկախ այն հանգամանքից, թե նրանք կոմունալ ֆոնդի, թե տնատիրոջ ֆոնդի սենյակում են ապրում.

4. Ընտանիքի յուրաքանչյուր անդամի համար տրամադրվում է բնակելի տարածություն յոթ և կես քառ. մետրի սահմաններում:[1]

5. Լրացուցիչ բնակարան կամ նրա բացակայության դեպքում լրացուցիչ բնակելի տարածություն ունենալու իրավունք են վայելում, համաձայն քաղխորհուրդների և գործկոմների կողմից կազմած ցուցակների, հետևյալ կատեգորիայի անձինք.—

ա) մեկուսացում պահանջող՝ վարակիչ և հոգեկան հիվանդությամբ տառապողներն այն պայմանով, յեթե նրանք ներկայացնեն հանձնաժողովից տրված վկայական.

բ) պետական հիմնարկների, ձեռնարկությունների, զինվորական դերատեսչությունների, նաև պրոֆեսիոնալ, կոոպերատիվ աշխատակիցները, վորոնք ըստ իրենց պաշտոնի բնույթի աշխատում են նաև տանը.

գ) առանձին արհեստով պարապող բժիշկները և ատամնաբուժները և այլ անձինք, վորոնք նախատեսված կլինեն քաղխորհուրդների և գործկոմների ցուցակներով:

6. Յեթե տնատիրոջ կամ վարձակալի բռնած բնակելի տարածությունը ավելի յե այս հրահանգի 4-րդ հոդվածով վորոշված նորմայից, քաղխորհուրդներին և գործադիր

կոմիտեներին իրավունք է վերապահվում, բացառիկ դեպքերում, վարչական կարգով իրացում կամ տեղափոխություն կատարելը:

7. Քաղաքացիներին իրենց բռնած բնակարաններից, վորպես ընդհանուր կանոն, կարելի յե վտարել դատական կարգով Քր. Որ. 171, 171–ա հոդվածներով նախատեսված դեպքերում, իսկ վարչական կարգով՝ միայն հետեվյալ դեպքերում.

ա) յեթե կոմունալ ֆոնդի բնակարանում բնակվողը չունի համապատասխան որդեր.

բ) յեթե բնակարանը յերեք ամիս մնացել է առանց օգտագործման.

գ) յեթե հիմնարկության կամ ձեռնարկության համար հատկացված շենքում բնակվողը այլևս վոչ մի առնչություն և կապ չունի տըվյալ հիմնարկության կամ ձեռնարկության հետ:

8. 7–րդ հոդ. «ա» և «բ» կետերում հիշված դեպքերում վարչական կարգով վտարումը կատարվում է քաղխորհուրդների և գործկոմների նախագահությունների վորոշումների հիման վրա, միլիցիայի միջոցով, իսկ «գ» կետում հիշված դեպքերում՝ հիմնարկության կամ ձեռնարկության պետի կամ վարիչի կարգադրությամբ, նույնպես միլիցիայի միջոցով:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1.— Դատարաններին ևս իրավունք է վերապահվում վարույթի մեջ գտնվող վորոշ գործերի առ-

թիվ հարկ յեղած դեպքերում խստացման կամ տեղափոխության մասին վորոշում կայացնելու:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 2· Խստացումը կամ տեղափոխությունը կարող է տեղի ունենալ թե միևնույն բնակարանի սահմաններում և թե տարբեր բնակարանների մեջ:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 3· 7-րդ հոդվածի «գ» կետում հիշված բանվորներին, նույնպես և նրանց հավասարեցված անձանց վարչական· կարգով վտարելը կարող է տեղի ունենալ այն դեպքում, յերբ քաղխորհուրդները կամ գործկոմները կամ վտարող հիմնարկությունները վտարվողներին կտրամադրեն համապատասխան բնակարան և փոխադրական միջոցներ:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 4· 7-րդ հոդվածի «բ» կետի կիրառության համար սահմանվում է հետևյալ կարգը·—

ա) ապահովագրված հիվանդներին տրվում է առավելագույն ժամանակ— 4 ամիս·

բ) գործուղման կամ արձակուրդի ժամանակը լրանալուց 1 ամիս·

գ) մասնավոր քաղաքացիներին, բացակայության դեպքում, տրվում է յերեք ամիս ժամանակ, յեթե բացակայության միջոցին նրա խնամքի տակ ապրող ընտա-

նիքի անդամները նրա բնակարանումն են ապրում։

9. Վարչական կարգով կիրարկվող վտարման, խտացման և տեղափոխման վերաբերյալ վորոշումների դեմ գանգատ կարելի յե տալ դատախազական մարմիններին յերեք որվա ընթացքում, հաշված վտարման, խտացման և տեղափոխման մասին հայտնելու որից։ Քաղխորհուրդները և գործկոմները պարտավոր են վտարման կամ տեղափոխման մասին յոթ որ առաջ գրավոր կերպով հայտնելու վտարման կամ տեղափոխման յենթակա անձանց։

10. Հյուրանոցներում բնակվող անձանց վտարելու կարգը սահմանվում է գավգործկոմների կամ քաղխորհուրդների առանձին կանոններով, վորոնք փակցված պիտի լինեն հյուրանոցի յուրաքանչյուր սենյակում։ Այդ պարտադիր կանոնները խախտելիս հյուրանոցում բնակվողները վտարվում են վարչական կարգով։ Հյուրանոցից վարչական կարգով վտարվածներին քաղխորհուրդները կամ գավգործկոմները պարտավոր չեն, նախ քան վտարումը, սենյակ տրամադրելու։

11. Բնակարանային նոր որենքի համաձայն տնայնագործները, արհեստավորները, ազատ արհեստով զբաղվող անձինք, առևտրականները և անաշխատ յեկամուտով ապրող այլ անձինք վճարում են որենքով նախատեսված կոպարների սահմաններում, իսկ տան-

տիրոջ հետ համաձայնության չգալու դեպքում բնակարանավարձի չափը վորոշում է դատարանը:

12. Բնակարանային նոր օրենքը չի տարածվում կոոպերացման իրավունքի հիման վրա կառուցված, վերաշինված և ավարտված տըների, ինչպես նաև հյուրանոցների վրա:

13. Տների հիմնական վերանորոգության բոլոր ծախսերը հոգում են տնատերերը և յեթե տնատերը հրաժարվի բնակարանը վերանորոգելուց, այդ դեպքում բնակվողին իրավունք է վերապահվում կատարել պահանջված վերանորոգությունը ի հաշիվ բնակարանավարձի, նախապես թույլտվության ստանալով գործկոմների և քաղխորհուրդների տեխնիկական մասից:

---

## ՎՈՐՈՇՈՒՄ

## ՀՍԽՀ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ

Բնակարանների հետ անխնա վարվող անձանց պատասխանատվությունն ուժեղացնելու մասին.

1928 թ. հուլիսի 11-ին.

Բնակարանային ֆոնդը պատշաճ վիճակում պահելու նպատակով ՀՍԽՀ Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը ՎՈՐՈՇՈՒՄ Է.

1. Առաջարկել քաղաքային խորհուրդներին և գավառային գործադիր կոմիտեներին հրատարակել պարտադիր վորոշում՝ բնակարաններից ոգտվող առանձին անձանց (վարձողներին) նրանց բռնած բնակարանների հետ անխնա վարվելու համար տուգանելու մասին:

Այդ տուգանքը գրվում է բնակարանային վարչությունների կամ կոմունալ տնտեսության մարմինների դիմումների հիման վրա, նկատի ունենալով տուգանվողների նյութական դրությունը:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1.— Այս հոդվածի կարգով հրատարակվող վորոշումների հիման վրա գանձվող տուգանքները հատկացվում են բնակարանային շինարարության բանվորական-բնակարանային ֆոնդին:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 2.— Անկախ վերոհիշյալ տուգանքից տնատերերը կարող են դատական կարգով հայց հարուցել շենքի հետ անխնա վարվելու հետեվանքով առաջացած վնասների հատուցում ստանալու համար:

2. Առաջարկել բնակարանային կոոպերացիայի միություններին պարբերաբար հետազոտել իրենց կազմի մեջ մտնող բնակարանային և բնակարանային-վարձակալական ընկերությունները՝ շենքերի հետ անխնա վարվելու փաստերը յերեվան հանելու համար:

3. Առաջարկել Արդարադատության ժո-

ղովրդական կոմիսարիատին դատական մարմիններին ցուցումներ տալ խստորեն կիրարկելու Քաղաքացիական և Քրեական Օրենսգրքի այն հոդվածները, վորոնք նախատեսնում են բնակարանների հետ անխնա վարվելու հետեվանքները և, մասնավորապես, վերաբերում են բնակարանների հետ անխնա վարվող քաղաքացիներին շենքերից վտարելուն:

(Որ. և Կարգ. Ժողովածու, 1928 թ. № 11 հոդ. 108)։

---

## ՎՈՐՈՇՈՒՄ

## ՀՍԽՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՅԻ ՅԵՎ. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ

### Քաղաքային խորհուրդների, տրանսպորտի յեվ արդյունաբերական ձեռնարկությունների կողմից կառուցված տների բնակարանավարձի մասին

1928 թ. հուլիսի 13-ին.

ԽՍՀՄ Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի և Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի 1928 թ. հունվարի 4-ի «Բնակարանային քաղաքականության մասին» վորոշման 11 հոդվածի (ԽՍՀՄ Օր. Ժող.— 1928 թ. № 6, հոդ.

49) Հիման վրա Կենտրոնական Գործադիր Կոմիտեն և Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը ՎՈՐՈՇՈՒՄ ԵՆ.

Քաղաքային խորհուրդների, տրանսպորտի և արդյունաբերական ձեռնարկությունների կողմից՝ սկսած 1924 թ. կառուցված տների համար բնակարանավարձը ե սահմանվում ՀՍԽՀ Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի և Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի 1928 թ. մարտի 10-ի «Քաղաքներում, գավառային ու գավառակային կենտրոններում և բանվորական ավաններում սահմանվող բնակարանային վարձի մասին» վորոշման (Որ. և Կարգ. Ժող. 1928 թ. № 4, հոդ. 31) համաձայն, ավելացնելով սահմանված կոպարները 25 %-ով:
(Որ. և Կարգ. Ժող. 1928 թ. № 11. հոդ. 113).

---

## ՎՈՐՈՇՈՒՄ

## ՀՍԽՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՅԻ ՅԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ

### Բնակարանային շինարարությունը խրախուսելու մասին

*1928 թ. հուլիսի 26-ին*

Նոր բնակելի տներ կառուցելու յեվ յեղածները նորոգելու ու վերանորոգելու աշխատանքները խրախուսելու նպատակով Կենտրո-

նական Գործադիր Կոմիտեն յեվ ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը ՎՈՐՈՇՈՒՄ ԵՆ.

1. Կառուցողներին իրավունք վերապահել իրենց ամրացրած, վերանորոգած կամ նոր կառուցած բնակելի, ինչպես նայեվ վոչ բնակելի շենքերն ու նրանց առանձին մասերը վարձով տալու՝ վարձակալի հետ հոժարակամ համաձայնությամբ սահմանվող պայմաններով:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Այս հոդվածում մատնանշված իրավունքները տարածվում են անտիրության կարգի մեջ մտնող բոլոր շենքերի վրա:

2. Այս վորոշման 1 հոդ. մատնանշված շենքեր կառուցողները իրավունք ունեն բնակելի տարածությունից ոգտվելու որենսդրությամբ սահմանվող նորմայից ավելի չափով:

3. 1-ին հոդվածում հիշված շենքեր կառուցողներն ազատվում են շենքերի մեկ յերրորդը կոմունալ ֆոնդին հատկացնելուց, ինչպես նաև շենքի խտացումից:

4. Կառուցողներին իրավունք է տրվում նոր կառուցվող, վերանորոգվող կամ ավարտվող շենքերում կառուցելու առևտրա-արդյունաբերական ու պահեստային շինություններ կամ անձամբ շահագործելու կամ փոխադարձ համաձայնությամբ վարձով տալու համար: Բնակելի տարածության յեվ առևտրաարդյունաբերական ու պահեստային շինությունների ծավալի հարաբերությունը վորոշ-

վում է կոմունալ տնտեսության բաժինների համաձայնությամբ։

5. Կոմունալ տնտեսության բաժիններին իրավունք է տրվում կառուցման իրավունքի պայմանագիր կնքելիս նրանց մեջ մտցնել նաև այլ պայմաններ, որոնք չեն. հակասում այս որոշմանը։

6. Այս որոշման ուժը տարածվում է նաև այն կառուցողների վրա, որոնք Կոմունալ Տնտեսության բաժնի հետ կառուցման իրավունքի պայմանագիր են կնքել նախ քան այս որոշումը հրատարակելը։

7. Տնատերերին իրավունք տալ իրենց տը–նատիրության սահմաններում կիսատ շենքերն ավարտելու, վերակառուցելու և նոր հարկեր շինելու, ինչպես նաև նոր շենքեր կառուցելու առանց նրանց արժեքը սահմանափակելու և առանց կոմունալ տնտեսության բաժինների հետ որևէ պայմանագիր կնքելու, գոյություն ունեցող շինարարական կանոնները պահպանելու պայմանով։

8. Կառուցողներին վերապահված արտոնությունները (1–4 հոդվածներ) նախորդ հոդվածում նախատեսված դեպքերում տարածվում են նաև տնատերերի վրա. այդ արտոնությունները տարածվում են ամբողջ տնատիրության վրա, յեթե ավարտված, լրացուցիչ կերպով կառուցված շինությունների յեվ ավելացված նոր հարկերի բնակելի տարածության

չափը կազմում է գոյություն ունեցող բնակելի տարածության առնվազն 50 տոկոսը:

9. Այս վորոշումով վերացվում է Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի 1923 թ. սեպտեմբերի 18-ի տնատերերին տրվող արտոնությունների մասին վորոշումը: (Որ. և Կարգ. Ժող. 1923 թ. № 7 հոդ. 151):

10. Հանձնարարել Ներքին Գործերի Ժողովրդական Կոմիսարիատին 2 շաբաթվա ժամանակամիջոցում քահագրդված գեղատեսչությունների համաձայնությամբ հրատարակել հրահանգ այս վորոշումը կիրառելու մասին: (Որ. և Կարգ. Ժող. 1928թ. №11 հոդ.- 120):

---

# ՎՈՐՈՇՈՒՄ

## ՀՍԽՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՑԻ ՑԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ

Հայպետռեալվարչության և զարամասերի երկաթուղայինն ու աշխատակիցներին բնակարանով ապահովելու մասին.

1930 թ. մայիսի 31-ին.

Անդրկենտգործկոմի և ԱՍՖԽՀ Ժողկոմխորհի 1929 թ. օգոստոսի 19-ի «Անդրկովկասյան վարչության մարմինների ու զորամասերի

հրամկազմին ու աշխատակիցներին բնակարա-
նով ապահովելու մասին» վորոշման համաձայն
Կենտրոնական Գործադիր Կոմիտեն և Ժողո-
վըրդական Կոմիսարների Խորհուրդը ՎՈՐՈ-
ՇՈՒՄ ԵՆ.—

1. Պարտավորեցնել տեղական խորհուրդ-
ներին Հայլեռքաղվարչության մարմինների
անունով ամրացնել այն բնակարաններն ու ա-
ռանձին սենյակները, վոր Հայլեռքաղվար-
չության մարմինների և զորամասերի հրամ-
կազմն ու աշխատակիցները զբաղեցնում են թե
կոմունալ մարմինների անմիջական ոգտագոր-
ծության տակ գտնվող քաղաքայնացված ըն-
նակելի շենքերում, թե բնակարանային-վար-
ձակալական կոոպերատիվ ընկերություննե-
րին պատկանող շենքերում և թե մասնավոր
տներում՝ որենքով սահմանված կարգով կո-
մունալ ֆոնդին հատկացված բնակելի շենքե-
րի 1/3-ի հաշվին:

2. Նախորդ հոդվածում մատնանշված ըն-
նակարաններից և առանձին սենյակներից կազ-
մել հատուկ ֆոնդ Հայլեռքաղվարչության
մարմինների վարչա-գործառնական կազմի և
հրամկազմի ու նրանց ընտանիքների բնակա-
րանային կարիքները բավարարելու համար:

3. 2-րդ հոդ. մատնանշված Հայլեռքաղ-
վարչության բնակարանային ֆոնդից ազատ-
վող բնակարաններն ու առանձին սենյակները
պետք է ոգտագործի Հայլեռքաղվարչությունն
իր աշխատակիցների և զորամասերի հրամ-

կոմի կարիքները բավարարելու համար՝ բը-
նակարանն ազատվելուց հետո յերեք օրվա ըն-
թացքում։

Այդ ժամանակամիջոցը լրանալուց հետո Հայպետքաղվարչության կողմից չօգտագործված՝ նրա անունով ամրացված բնակարանները ու սենյակներն անցնում են տեղական խորհուրդների տրամադրության տակ և բաշխվում են նրանց հայեցողությամբ, ընդհանուր կոմունալ ֆոնդի օգտագործման կարգով։

4. Պետքաղվարչության անունով ամրացված տների վրա, տարածվում են Ներքգործժողկոմատի և Արդժողկոմատի 1928 թ. ապրիլի 9-ի բնակարանային օրենքի կիրարկության վերաբերյալ հրահանգի 8-ա հոդվածը, որ վերաբերում է Ռազմա-Ծովային ժողկոմատի մարմինների անունով ամրացված տներից վարչական կարգով վտարելուն (Որ. ժող. 1929 թ. 2-րդ բաժ. № 3, հոդ. 32) (Որ. և Կարգ. ժող. 1930 թ. № 8. հոդ. 141).

## ՀՐԱՀԱՆԳ

ԽՍՀՄ Կենտգործկոմի և Ժողկոմխորհի 1931 թվի ոգոստոսի 17-ի՝ Ռազմական և Ծովային գործերի ժողովրդական կոմիսարների մարմիններին պատկանող տներից Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակի շարքերում չգտնվող անձանց վըտարելու վերաբերյալ վորոշումը կիրառկելու մասին.

*Հաստատված է ՀՍԽՀ Ժողկոմխորհի կողմից 1931 թ. դեկտեմբերի 2-ին.*

*ԽՍՀՄ Կենտգործկոմի և Ժողկոմխորհի 1931 թ. ոգոստոսի 17-ի Ռազմական և Ծովային Գործերի Ժողովրդական Կոմիսարների մարմիններին պատկանող տներից Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակի շարքերում չգտնվող անձանց վտարելու մասին՝ (ԽՍՀՄ Որ. և Կարգ. Ժող. 1931 թ. № 53 հոդ. 342) վորոշումը գործնականապես իրականացնելու նպատակով, Ժողովրդական կոմիսարների Խորհուրդն առաջարկում է ՀՍԽՀ բոլոր քաղխորհուրդներին և շրջգործկոմներին՝ հիշյալ վորոշումը կիրառելիս ղեկավարվել հետևյալ սկզբունքներով.*

1. *Միութենական որենքի համաձայն՝ Ռազմական և Ծովային Գործերի Ժողովրդական Կոմիսարների մարմիններն իրավունք ունեն իրենց պատկանող տներից տարվա բոլոր*

ժամանակներին վարչական կարգով վտարել բոլոր այն անձանց, վորոնք չեն գտնվում Բանվոր-Գյուղացիական Կարմիր Բանակում. վըտարման այդ իրավունքը տարածվում է Թաղմական դերատեսչության հատկացված բոլոր տների վրա՝ անկախ նրանից, թե ինչ հիմունքներով են այդ տները գտնվում Թաղմական և Ծովային Գործերի Ժողովրդական Կոմիսարիատի տրամադրության տակ (ազգայնացում, ամրացում, կառուցման իրավունք, վարձակալություն):

2. Վտարվող բանվորներին, ծառայողներին, աշխատավորներին և այլ կատեգորիաներին քաղխորհուրդներն ու շրջգործկոմները տըրամադրում են սանիտարական տեսակետից բընակության համար պետքական տարածություն՝ վտարելու պահին վտարվողի ունեցած բնակելի տարածությունից վոչ պակաս չափով:

Եթե վտարվողը պատկանում է հրամկազմի և գտնվում է յերկարատեվ արձակուրդում կամ Բ-Գ.Կարմիր Բանակի պահեստում, կամ թե ռազմական դերատեսչության թոշակառու յե, ապա նրան բնակելի տարածություն է տրամադրվում առաջին հերթին:

Աշխատավորները վտարվում են՝ նրանց վտարելու մասին հայտարարությունը տալու պահից յերկու ամսվա ժամանակամիջոցը լըրանալուց հետո, անկախ այն հանգամանքից, թե քաղխորհուրդը կամ շրջգործկոմը հիշյալ

ժամանակամիջոցում վարակողին տրամադր-
րում է բնակելի տարածություն, թե ոչ:

Եթե վարակողը պատկանում է անաշ-
խատ կատեգորիային, ապա վարումն ի կա-
տար է ածվում վարձելու մասին հայտարարե-
լուց հետո 7 օրվա ընթացքում, առանց բնակե-
լի տարածություն տրամադրելու:

4. Բնակարաններից վարչական կարգով
վտարման ենթակա են նաև Բ.—Գ. Կար-
միր բանակի կադրային հրամկազմին պատ-
կանող անձինք, որոնք փոխադրված լինելով
այլ վայր, ծառայության նոր տեղում բնակելի
տարածություն ստանալու օրից մեկ ամսվա
ընթացքում չեն ազատում իրենց կողմից բռն-
նած տարածությունը ռազմական դերատեսչու-
թյան պատկանող տներում (հոդ. 1). Հիշյալ
անձինք վտարվում են առանց բնակելի տարա-
ծություն հատկացնելու:

5. Այս հրահանգով նախատեսված ան-
ձանց վտարումն ի կատար են ածում միլիցիա-
յի մարմինները այն ցուցակներով, որ կայա-
զորի շտաբները ներկայացնում են քաղխոր-
հուրդներին և շրջգործկոմներին:

6. Եթե Բ.—Գ Կարմիր Բանակի կադրա-
յին հրամկազմին պատկանող անձանց, այլև
նրանց հետ ապրող անձանց այլ վայրեր տե-
ղափոխելու հետեվանքով քաղաքայնացված
ֆոնդի տներում բնակելի տարածություն է ա-
զատվում, ապա քաղաքային խորհուրդներն
ու շրջգործկոմները պարտավոր են ամբողջ

բնակելի տարածությունը հանձնել կայազորի պետերին ի տնօրինություն: Այդ տարածությունը բնակության համար տրամադրվում է կայազորի պետերի ցուցումներով:

7. Քաղխորհուրդները և շրջգործկոմները պարտավոր են այս հրահանգում սահմանված կարգով յերեք ամսվա ընթացքում Ռազմական գերատեսչության պատկանող տներից վտարել այն անձանց, վորոնք այդ միջոցին այլևս Բ. Գ. Կարմիր Բանակում չեն գտնվում:

8. Այս հրահանգի հրատարակությամբ վերացվում են բոլոր այն վորոշումները, վորոնք վերաբերում են Ռազմական գերատեսչության պատկանող տներից բնակվող անձանց վտարելուն:

9. Պարտավորեցնել Հանրապետության դատախազին հսկելու այս հրահանգի կիրառման վրա:

---

## ՀՐԱՀԱՆԳ

## ՀՍԽՀ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ

*1932 թ. մարտի 10-ին*

Ի հետեվումն Հ.Ս.Խ.Հ. Ժողկոմխորհի 1932 թ. փետրվարի 11-ի վորոշման, «կարգավորելու նոր շենքերում բնակարաններ տա-

ցող բանվորների և ծառայողների նախկին բնակարանների բաշխման հարցը», և ի լրումն Ներք-Գործժողկոմատի և Արդժողկոմատի 1928 թ. ապրիլի 3-ի հրահանգի, Կոմունալ Տնտեսության ժողովրդական Կոմիսարիատը սահմանում է հետևյալ կարգը՝

1. Կոմունալ բաժիններին պատկանող տներում, ինչպես նաև մասնավոր տների բնակտարածության կոմունալ ֆոնդում բնակվող բանվորների և ծառայողների կողմից նոր շենքերում բնակարաններ ստանալու դեպքում նրանց նախկին բնակարաններն անցնում են համապատասխան կոմունալ բաժինների անմիջական տրամադրության ու տնօրինության տակ:

3. Նոր շենքերում բնակարաններ ստացող բանվորները և ծառայողները պարտավոր են կոմունալ բաժիններին պատկանող տների ու մասնավոր տների բնակտարածության կոմունալ ֆոնդի իրենց նախկին բնակարանները, նոր շենքերը տեղափոխվելիս, հանձնել համապատասխան կոմունալ բաժիններին:

3. Արգելվում է նոր շենքերում բնակարաններ ստացող բանվորներին և ծառայողներին կոմունալ բաժիններին պատկանող տների և մասնավոր տների բնակտարածության կոմունալ ֆոնդի իրենց նախկին բնակարաններում փոխանակություններ կատարել կամ բնակեցնել այլ անձանց, առանց համապատասխան կոմունալ բաժինների հատուկ թույլտվության:

Այդ դեպքում կոմունալ բաժինների տների ու մասնավոր տների կոմունալ ֆոնդի բնակարաններն առանց հիշված թույլատվության զբաղեցնողները չենթարկվում են վտարման, ապօրինի զբաղեցրած բնակարանից, վարչական կարգով։

4. Բնակշինարարական բոլոր կազմակերպությունները, կառուցված նոր շենքերում, բանվորներին և ծառայողներին բնակարաններ հատկացնում են միայն համապատասխան կոմունալ բաժիններից վերջիններին պատկանող տների և մասնավոր տների կոմունալ ֆոնդի, նրանց նախկին բնակարանները, հիշված բաժիններին հանձնելու մասին տեղեկանք ներկայացնելուց հետո։

5. Կոմունալ բաժինների տների պարետաները և պատասխանատու լիազորները, ինչպես և մասնավոր տնատերերը պարտավոր են՝ առաջինները կոմունալ բաժիններին պատկանող տների, իսկ վերջիններն՝ իրենց տան բնակարանածության կոմունալ ֆոնդի բնակարանների ազատվելու, ինչպես և այդպիսիները առանց համապատասխան կոմունալ բաժինների թույլտվության զբաղեցնելու ամեն մի դեպքի մասին տեղեկացնել վերջիններին։

6. Սույն հրահանգով նախատեսնված կանոնները խախտելու դեպքում զանցառուները ենթակա են քր. պատասխանատվության Քր. Որ. 100 և 115 հոդվածներով։

## ՎՈՐՈՇՈՒՄ

### ՀՍԽՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՏԻ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ

Գիտական աշխատավորների բնակարանային պայմանները բարելավելու մասին

*1933 թ. հունիսի 2 ին*

*ԽՍՀՄ Կենտգործկոմի և Ժողկոմխորհի 1933 թ. մայիսի 27-ի՝ «գիտական աշխատավորների բնակարանային պայմանները բարելավելու մասին» յեղած որոշման հիման վրա՝ Կենտրոնական Գործադիր Կոմիտեն և Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը ՎՈՐՈՇՈՒՄ ԵՆ.—*

1. *Իրավունք վերապահել գիտական աշխատավորներին ունենալու իրենց պարապմունքների համար լրացուցիչ սենյակ, իսկ սենյակ չլինելու դեպքում, առնվազն 20 քառ. մետր լրացուցիչ բնակ. տարածություն:*

2. *Գիտական աշխատավորների զբաղեցրած քաղխորհուրդների ֆոնդի բնակարանները ազատվելու դեպքում հանձնվում են ՀՍԽՀ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի կից Գիտնականների Ապահովող Հանձնաժողովին գիտական աշխատավորներին տրամադրելու համար:*

Ծանոթություն.— *Այս հոդվածը չի տարածվում կառուցման իրավունքի հիման վրա*

շինված շենքերի, բանվորական բնակարանային շինարարական ընկերությունների, նույնպես և այն հիմնարկ-ձեռնարկությունների շենքերի վրա վորոնց համար օրենքով իրավունք է վերապահված վարձել տվյալ հիմնարկ-ձեռնարկությունների հետ կապը խզած անձանց:

3. Գիտական աշխատավորի զբաղեցրած թե՛ հիմնական և թե լրացուցիչ բնակարանային տարածության համար, անկախ նրա չափից, վճարվում է սովորական նորմաներով: (Լրացուցիչ մասը յենթակա չե կրկնավճարի):

4. Գործուղման մեջ գտնվող գիտական աշխատավորի բնակարանային տարածությունը, անկախ գործուղման տեվողությունից, մնում է նրա տրամադրության տակ:

5. Գիտական աշխատավորին, իրավունք է վերապահվում իր բացակայության ժամանակ բնակարանը ժամանակավորապես տրամադրել իր ցանկացած անձանց, այդ ժամանակամիջոցում բնակարանի վարձը հաշվում է վերջինիս վաստակի համաձայն:

6. Գիտական աշխատավորի բացակայության ժամանակ, նույն վորոշման 5-րդ հոդվածի համաձայն, ժամանակավորապես նրա բնակարանն զբաղեցնող անձինք պարտավոր են գիտ. աշխատավորի պահանջով ազատել բնակարանը, հակառակ դեպքում վտարվում են վարչական կարգով, առանց բնակարան տրամադրելու:

7. Մահացած գիտական աշխատավորի

ընտանիքին իրավունք և վերապահվում 3 ամսվա ընթացքում օգտագործել գիտական աշխատավորի ամբողջ թե հիմնական և թե լրացուցիչ բնակարանային տարածությունը՝ վճարելով բնակարանի վարձը սովորական նորմաներով։

8. Գիտական աշխատավորների բնակարանային կոոպերատիվ շինարարությանն աջակցելու նպատակով՝ գիտական աշխատողների բնակարանային շինարարության կոոպերատիվները փայերի կուտակման կարգը, վարկավորման պայմանների, շինանյութերով ապահովելու, շինարարության հերթականության տեսակետից հավասարեցնել դերակշռող բանվորական կազմ ունեցող բնակարանային շինարարական կոոպերատիվ ընկերություններին։

9. Առաջարկել ՀՍԽՀ կոմբանկին և բնակարանային շինարարական կոոպերացիայի կենտրոնական վարչությանը՝ 1934 թ. պլանով նախատեսել գիտական աշխատավորների համար կոոպերատիվ շենքերի կառուցում և միջնորդություն հարուցել Կենտրոնական Կոմմունալ բանկի առաջ՝ համապատասխան վարկեր տրամադրելու։

10. Առաջարկել դատախազության մարմիններին՝ ձեռք առնել բոլոր անհրաժեշտ միջոցները գիտական աշխատավորների իրավունքները պաշտպանելու համար։

(Որ. և Կարգ. Ժողով. 1933 թ. № 2 հոդ. 53)։

# ՎՈՐՈՇՈՒՄ

## ՀՍԽՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵ-ՑԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ

Գիտական աշխատավորների բնակարանային պայմանների բարելավելու վերաբերյալ որոշման 8-րդ կետը («Խ. Հ.» № 162, 1933 թ. հուլիսի 15) փոփոխել և լրացնել հետևյալ կերպ.—

1933 *թ. նոյեմբերի* 21-*ին*

*Հոդ.* 8-*րդ.*

*Գիտական աշխատավորների բնակարանային կոոպերատիվ շինարարությանը աջակցելու նպատակով, գիտական աշխատողներին, բնակարանային շինարարության կոոպերատիվները, փայերի կուտակման կարգի, վարկավորման պայմանների, շինանյութերով ապահովելու, շինարարության հերթականության տեսակետից հավասարեցնել գերակշռող բանվորական կազմ ունեցող բնակարանային շինարարական կոոպերատիվ ընկերություններին:*

*Բնակարանային շինարարության կոոպերատիվներում դիֆերենցիալ փայերի մուծման և բնակարան ստանալու հերթականության հարցում գիտական աշխատավորներին հավասարեցնել բանվորներին (Որենք. և կարգ. ժող.* 1933 *թ.* № 6, *հոդ.* 103):

# ՎՈՐՈՇՈՒՄ

## ՀՍԽՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՏԻ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ

խորհրդային գրողների և կոմպոզիտորների բնակարանային պայմանները բարելավելու մասին․

1933 *թ․ դեկտեմբերի 14-ին․*

***ԽՍՀՄ*** *Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի և Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի* 1933 *թ․ հուլիսի* 7 *-ի՝ «Գրողների բնակարանային պայմանները բարելավելու մասին» (Օրենք և Կարգ․ Ժող․* 1933 *թ․* №.-43, *հոդ․* 252) *և* ***ԽՍՀՄ*** *Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի* 1933 *թ․ հոկտեմբեր* 2*-ի «Խորհրդային կոմպոզիտորների բնակարանային պայմանները բարելավելու մասին» (Օրենք․ և Կարգ․ Ժող․* 1933 *թ․* №-62 *հոդ․* 373) *վորոշումների հիման վրա, Կենտրոնական Գործադիր Կոմիտեն և Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը* ՎՈՐՈՇՈՒՄ ԵՆ՝

*Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի և Ժողովրդական Կոմիսարների խորհրդի* 1933*թ․ հուլիսի Ձ-ի՝ «գիտական աշխատավորների բնակարանային պայմանները բարելավելու մասին» վորոշումը (Օրենք․ և Կարգ․ Ժող․* 1933 *թ․* №-2, *հոդ․* 53) *ամբողջությամբ տարածել նաև* ***ՀՍԽՀ*** *խորհրդային գրողների և*

կոմպոզիտորների միությունների անդամների վրա:

---

# ՀՐԱՀԱՆԳ

## ՀՍԽՀ ԱՐԴԺՈՂԿՈՄԱՏԻ ՅԵՎ ԿՈՄՏՆՏԺՈՂԿՈՄԱՏԻ

### Աշխատավորների բնակարանային իրավունքների խախտման յեվ աղավաղումների դեմ պայքարն ուժեղացնելու մասին

*1933 թ. դեկտեմբերի 25-ին*

*Աշխատավորների բնակարանային իրավունքների պաշտպանության ասպարեզում տեղական կոմունալ բաժինները պետք է լինեն բնակարանային քաղաքականության ճիշտ ու անշեղ կենսագործողները, ամեն կերպ պայքարելով որենքների բոլոր տեսակի խախտումների ու աղավաղումների դեմ:*

*Սակայն մի շարք տեղերում կոմունալ մարմինները անթույլատրելի բյուրոկրատական վերաբերմունք են ցուցաբերում դեպի քաղաքական կարեվոր նշանակություն ունեցող այդ խնդիրը:*

*Մի շարք վայրերում, հակառակ գործող որենսդրության ու կանոնների, կատարվում են հարկադիր խտացումներ, վտարումներ և խորհրդային իշխանության բնակարանային քաղաքականության այլ աղավաղումներ:*

ԽՍՀՄ կենտգործկոմն ու ժողկոմխորհը 1933թ. հունիսի 25-ի «Հեղափոխական Որինականության մասին» վորոշումով պարտավորում են իշխանության տեղական մարմիններին ապահովել հեղափոխական որինականության կենսագործումը:

Ելնելով վերոհիշյալից Արդժողկոմատը և Կոմտնտժողկոմատն ԱՌԱՋԱՐԿՈՒՄ ԵՆ՝

1. Կոմունալ տնտեսության մարմինների գծով

1. Աշխատավորների գանգատները բնակարանային տնտեսության մարմինների, տն–տրեստների և այլ հաստատությունների ապօրինի գործողությունների առթիվ քննության առնել անմիջապես, համենայն դեպս վոչ ուշ յերեք որից, այդպիսին ստանալուց հետո, և գանցառուների նկատմամբ հարց հարուցել խիստ պատասխանատվության յենթարկելու համար:

2. Միջոցներ ձեռք առնել, վորպեսզի տն–տրեստների և տնային վարչությունների կողմից տնտեսական և ֆինանսական աշխատանքները տարվեն բնակիչների ոժանդակությամբ և այլ հասարակական մարմինների հետ համաձայնեցված կերպով:

3. Արգելել աշխատավորների ոգտագործությունից հանելու ընդհանուր ոգտագործության համար ծառայող ոգտակար տարածությունը ((նախասենյակներ, խոհանոցներ, զուգարաններ, լողարաններ, այնպիսի շենքեր, վորոնք խոհանոցի հետ մեկ մուտք ունեն, սան–

դուխոններ, անցքեր և այլն) և առհասարակ վատացնել աշխատավորների բնակարանակենցաղային պայմանները։

4. Ազատված սենյակների համար կարգադրություններ (օրդերներ) տալուց հաշվի առնել տվյալ շենքի բնակարանների խտությունը, վորովհետև համաձայն գոյություն ունեցող կանոնների, տվյալ շենքի բնակիչներն են, վոր առաջին հերթին իրավունք ունեն խտացման։

5. Դադարեցնել նորմայից ավելի բնակտարածություն վերցնելը վոչ դատական կարգով։

6. Անմիջապես վերացնել բոլոր կոմունալ և բնակկոոպերացիայի մարմինների այն ապորինի կարգադրությունները, վորոնցով սահմանված են որենքով չնախատեսված, բնակիչների ինքնահարկում, որենքով սահմանված փայավճարների չափերից ավելի գանձում, սխալ վճարումներ, խտացումներ, լրացուցիչ տարածության իրավունք ունեցողներին այդ իրավունքից զրկել և այլն։

7. Արգելել, որենքով չսահմանված կարգով մասնատիրական շենքերի քաղաքայնացումը նրանց տերերի կողմից վերանորոգումներ չկատարելու, հարկերն ու տուրքերը ժամանակին չվճարելու պատրվակով և այլն։

8. Թույլ չտալ որենքով տրված կառուցման իրավունքի արտոնությունների խախտումներ։

9. Վերացնել արգելքները կառուցման իրավունք վայելողներին և մասնավոր շենքերի տե-

բերին որմնական զարդարքներ կատարելու` շենքերի և կառուցման իրավունքի վերաբերյալ:

2. Դատարանի և դատախազության գծով.

10. Առաջարկել դատական և դատախազական մարմիններին` սիստեմատիկ պայքար մղել աշխատավորության բնակարանային իրավունքների ամեն տեսակի խախտումների դեմ:

11. Աշխուժացնել բնակկոոպերացիայի և բնակարանտերի տնտեսությունների կից ընկերական դատարանների աշխատանքները, ուժեղացնելով ժողդատարանների հսկողությունը և համապատասխան ղեկավարությունը:

12. Չընդունել դատարանի քննության և կարճել արդեն ընդունված հայցերը`

ա) Խտացման և փոխադրության միջոցով նորմայից ավելի բնակելի տարածությունները վերցնելու մասին:

բ) Ավելորդ միջանցք և նրա հետ կապ ունեցող սենյակները վերցնելու մասին, առանց հայցվորի կողմից շինվարչություններից, հրդեհային և սանիտարական հսկողությունից ակտեր ներկայացնելու այն մասին, վոր միջանցիկ սենյակների վոչ միջանցիկ դարձնելը տեխնիկապես հնարավոր է և տնտեսապես նպատակահարմար:

13. Ավելորդ վոչ միջանցիկ սենյակները վերցնելու գործերը քննելու ժամանակ թույլ չտալ հարկադիր կերպով խտացնել մեկ սեն-

ձակում տարբեր սեռերի համար անձանց (բացի ամուսիններից), ինչպես և ամուսինների սենյակում՝ տասը տարեկանից բարձր հասակի յերեխաներին:

14) Սահմանել հսկողություն, վորպեսզի վարչական կարգով սենյակից վտարելը կատարվի բացառապես միայն գործող որենսդրությամբ նախատեսված դեպքերում:

15. Դատախազական մարմիններին՝ ստուգել աշխատավորների բնակարանային իրավունքի խախտման ու աղավաղման բոլոր դեպքերը, վորոնք լույս են տեսնում կենտրոնական և տեղական թերթերում ինչպես և պատի թերթերում, և որինական պատասխանատվության յենթարկել հանցավորներին:

Արդժողկոմի և Հանրապետության
Դատախազ՝ Փ. ԹՈՐՈՍՅԱՆ
Կոմտնտժողկոմ՝ Հ. ՅԱՂՈՒԲՅԱՆ

---

## ՔԱՂՎԱԾՔ

## ՀՍԽՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՈՐԵՆՍԳՐՔԻՑ

- Բնակելի շենքերի վարձակալության պայմանագրերը, նրանց կնքելու պայմանաժամը լրացնելուց հետո, ինքնաբերաբար նորոգվում են միևնույն պայմաններով անորոշ ժամանակով, անկախ վարձատուի համաձայնությու-

նից, յեթե վարձակալ են հանդիսանում՝ ա) պետական հիմնարկներն ու ձեռնարկությունները, բ) կոոպերատիվ կազմակերպությունները, գ) վարձու բանվորներն ու ծառայողները, դ) արհեստագործական կոոպերացիայի ցանցում յեղած և հատուկ օրենքի պահանջներին բավարարող արտելների անդամները (ԽՍՀՄ Օր. և Կարգ. Ժող. 1930թ. №-56, հոդ. 588) ե) պետական ուսումնական հիմնարկների ուսանողները, զ) կարմիր բանակայինների հաշվին ապրող՝ նրանց ընտանիքի անդամները, է) աշխատանքի և պատերազմի հաշմանդամները:

Այդ դեպքերում պայմանագիրը լուծելու իրավունքը պատկանում է միայն վարձակալին, բացի 171 և 172-րդ հոդվածներում մատնանշված դեպքերից (ՀՍԽՀ Կենտգործկոմի և Ժողկոմխորհի 1931 թ. ապրիլի 27-ի վորոշման խմբագրությամբ: Օր. և Կարգ. Ժողով. 1931 №2, հոդ. 94):

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1.— Այդ հոդվածում մատնանշված իրավունքը պատկանում է մասնավոր ձեռնարկությունների այն ծառայողներին միայն, վորոնք իրավունք ունեն արհեստակցական միության անդամ լինելու:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 2.— Այս հոդվածի ներգործությունը չի տարածվում այն անձանց վրա, վորոնք բնակվում են կառուցման իրավունքի վերաբերյալ պայմանա-

գրերի հիման վրա նոր կառուցված, այլ և կիսատ ավարտած ու վերանորոգած տնե-րում:

Եթե վարձատուն չի կամենում յեր-կարացնել պայմանագիրը և վարձակալը հրաժարվում է բնակարանն ազատելուց, վտարումը տեղի յե ունենում ընդհանուր դատական կարգով:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 3.— Վարձակալին՝ բնակարանի վարձակալության պայմա-նագիրը ինքնաբերաբար, առանց վարձա-տույի համաձայնության նորոգելու իրա-վունքը, վոր մատնանշված է 156 հոդվա-ծում, չի տարածվում այն շենքերի վար-ձակալության վրա, վորոնք անմիջապես կապված են հողագործական տնտեսու-թյան հետ: (ՀՍԽՀ Կենտգործկոմի 1926թ. մայիսի 20-ի վորոշման խմբագրու-թյամբ):

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 4.— Այս հոդվա-ծի ներգործությունը չի տարածվում այն անձանց վրա, վորոնք ապրում են ելեկ-տրոկայանների և յենթակայանների տե-րիտորիայում գտնվող շենքերում և վոչ մի կապ չունեն, այդ ձեռնարկների հետ կամ իրենց կապը կտրել են նրանց հետ:

Հիշյալ անձանց վտարումը կատարվում է ԽՍՀՄ Կենտգործկոմի և Ժողկոմխորհի 1933թ. հուլիսի 17-ի ու Անդրկենտգործկոմի 1933թ. օգոստոս 17 վորոշումների կարգով: (ՀՍԽՀ

կենտգործկոմի և ժողկոմխորհի 1933 թ. սեպ-
տեմբերի 25-ի վորոշման խմբագրությամբ.
«Օրենք և Կարգ. Ժողովածու 1933 թ. № 4
հոդ. 82):

171 հոդ.: Դատարանը կարող է վաղաժամ վոչնչացնել վարձակալության պայմանագրերը շահագրգռված անձերի և հիմնարկությունների պահանջմամբ.—ա) յեթե վարձատուն պայմանավորված գույքը չի տրամադրում վարձակալին ոգտագործելու համար, բ) յեթե վարձատուն սահմանված ժամկետին չի կատարել այն նորոգությունը, վոր իր պարտքն է, կամ յեթե գույքը վորեվե հանգամանքով, վորի համար վարձակալը պատասխանատու չէ,— պիտանի չլինի պայմանագրով նախատեսված ոգտագործության համար. գ) յեթե վարձակալը դիտավորյալ կերպով կամ անհոգությամբ վատթարացնում է գույքի վիճակը, դ) յեթե վարձակալն գույքն ոգտագործում է որենքի, պայմանագրի կամ գույքի նպատակին անհամապատասխան յեղանակով, ե) յեթե բնակարանի վարձակալն իր վարքով ուրիշ բնակվողների համար անհնարին է դարձնում համակեցությունը նրա հետ մի սենյակում կամ բնակարանում, զ) յեթե պետական ձեռնարկության վարձակալը սահմանված ժամանակին արտադրանքի քանակը չի հասցրել պայմանագրով վորոշված չափին. է) յեթե վարձակալը սահմանված ժամանակին չի կատարել այն նորոգությունը, վոր իր պարտքն է, թ) յեթե բը-

նակարանավարձը չեն վճարում պետական և մասնավոր հիմնարկությունների բանվորներն ու ծառայողները, սոցիալական ապահովություն վայելող աշխատանքի և պատերազմի հաշմանդամները, զորաժողովի յենթարկվածների ընտանիքները, սոցիալական ապահովագրության գանձարկղներից նպաստ ստացող գործազուրկները, նրանց համար սահմանված վճարաժամից 2 ամիս լրանալուց հետո, յեթե բնակարանավարձը չեն վճարում մյուս քաղաքացիները — նրանց համար սահմանված վճարումից յոթօր լրանալուց հետո: Բնակարանավարձը չվճարելու հավասար է համարվում ջրի, կոյուղու, վառելքի, լուսավորության վարձ չտալը, յեթե այդ բաները վարձատուն է մատակարարում, և բնակարանի նորոգության ծախքը չըվճարելը, յեթե այդ վարձակալի պարտականությունն է,— այդ վարձը պահանջելուց հետո հիշյալ յերկամսյա և յոթնօրյա ժամանակամիջոցները լրանալուց հետո, ժ) յեթե բնակարանի հիմնական նորոգության անհրաժեշտություն կա, այն պայմանով, վոր նորոգությունը վերջանալուց հետո բնակարանը անպայման տրվի նորոգությունից առաջ այնտեղ ապրողներին, յեթե նրանք այդ ցանկանան:

(ՀՍԽՀ Կենտգործկոմի 1926 թ. մայիսի 20-ի վորոշման խմբագրությամբ).

171. Ա. Հոդ. Ցերդ. դադարում է աշխատանքի պայմանագիրը, վորը կնքված է վարձվածին

հատուկ կացարան տալու պայմանով (տնային բանվորներ և ծառայողներ), աշխատանք տվողն իրավունք ունի պահանջելու, որ կացարանն ազատեն։

Այս պահանջը ներկայացնելուց յերկու շաբաթ հետո աշխատանք տվողը կարող է հայց սկսել այն անձանց դեմ, վորոնք հրաժարվում են կացարանը հոժարակամ ազատելուց։

(ՀՍԽՀ Կենտգործկոմի 1926 թ. մայիսի 20-ի վորոշման խմբագրությամբ).

172 հոդ. Վարչական կարգով բնակարանից վտարելը թույլ է տրվում միայն որենքով հատկապես մատնանշված դեպքերում։

Այս դեպքերում նախազգուշացման պայմանաժամը կարող է 155-րդ հոդվածում մատնանշվածից ավելի կարճ լինել։

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0045632

(204.)

A I/2886

Жилищное Законодательство
Издание Наркомюста ССРА
Эривань, 1934